հանապազ երկնէին 'ի միտս իւրեանց յափշտակել զմի մասն գերեզմանատան Հայոց, և խառնել 'ի բաժինս իւրեանց, սակայն սպասէին դիպող առթի և ժամանակի արդիւնաւորել զխորհուրդս իւրեանց։ Եւ զի յառաջագոյն որսացեալ էին 'ի կողմն իւրեանց զդատաւորն եւ զայլազգիս քաղաքին եւ հնարիւք առեալ 'ի նոցանէ մուրհակս, որպէս թէ փոխառուցեալ Հայոց զմի մասն գերեզմանատան, (յերկայն · յարեւելից յարեւմուտս 65 · և 'ի լայն · 'ի հարաւոյ 'ի հիւսիս 37 կանգունն) օրինօք դատարանի վաճառեալ իցէ Լատինաց 'ի թուին Հիճրեթի ١٠٦٩։ Զայսմանէ ոչ ինչ տեղեկութիւն ունէին Հայք։ Եւ 'ի ժամանակիս յայսմիկ յետ մերժելոյ երից Փոխանորդաց զամբաստանութիւնս այլազգեաց Սիոնի սակս բռնադակ գերեզմանատանց, Փոխանորդն Լատինաց չոքաւ առ դատաւորն, և մատուցեալ նմա զմուրհակն զայն, խնդրեաց 'ի նմանէ հրաման չինել զորմն չուրջանակի թազաւոփ, և որոշել ըստահմանս տեղւոյն ըստ չափոյ կանգնոց զոր գրեցաք ըստ ցուցանելոյ մուրհակին։ Եւ 'ի հրամայել դատաւորին, ըստկիզբն արար փորելոյ զհիմունս · տեսեալ զայս Փոխանորդին եւ ժողովրդոյն Հայոց՝ դիմեցին բազմութեամբ առ դատաւորն, և ամբաստան եղեն զյափշտակութենէ Լատինաց։ Դատաւորն յետ քննելոյ եւ իմանալոյ զխնդիրն՝ արգել զփոխանորդն Լատինաց 'ի գործոյ, զի տեղին չէր ինքեանց, և պատուիրեաց իւրաքանչիւրոց չէլանել արտաքս քան զսահմանն։ Լատինք ոչ բանից դատաւորին անսացին, և ոչ 'ի գործոյ անտի յետս կասեցան։ Հայք վերըստին բողոքեցին, եւ յայտ արարին թէ նախնիք իւրեանց թազեալ կան անդ, և չէ հնար զայն տեղի մատնել 'ի ձեռս օտարաց · դատաւորն բազմութեամբ այլազգեաց 'ի քննութիւն եկ տեղւոյն, յորում ետես զբազում գերեզմանս Հայոց · և 'ի հարցանել ցայլազգիսն, նոքա ասեն թէ Հայք թազեալ են զմեռեալս իւրեանց, որպէս յայտնի երեւին տապանաքարքն։ Դարձ արարեալ անտի դատաւորին գրեաց 'ի Դուռն, և ըստ թախանձելոյ Հայոց խնդրեաց հրովարտակաւ բառնալ զընդդիմութիւնն Լատինաց։ Զկնի աւուրց կուսակալն Դամասկոսի Ազիմ Զատէ Մէհմմէտ Փաշա եկ 'ի չրջիլ 'ի գաւառն ըստ սովորութեան և